

# ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

## Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԷՋ

Ատրպէյճանական շարք մը բնակավայրերուն մէջ, անասելի խժողովութիւններու զոհ գացած հայերուն հոգւոյն համար, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տաճարին կամարներուն տակ, Կիրակի 13 Մարտին հոգեհանգստեան պաշտօն տեղի ունեցաւ, նախագահութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.-ի:

Եկեղեցական այս ծիսակատարութեան ներկայ գտնուեցան Սոււկայիթէն եւ ատրպէյճանական միւս շրջաններէն Հայաստան ապաստանած աղէտեալներ եւ տասնեակ հազարներու հասնող Հայաստանցի հայեր:

Մոսկուայի գերեզմանատան հայկական մատուոյն առջեւ եւս հաւաքուած էին հազարաւոր ժողովուրդ, ներկայ գտնուելու համար հոգեհանգստեան պաշտօնին:

Նոյն օրը, Լոնտոնի Ս. Պետրոս եւ Ս. Սարգիս եկեղեցիներուն մէջ եւս տեղի ունեցան հոգեհանգստեան պաշտօններ հայ նորագոյն նահատակներուն համար:

Իրենց քարոզներուն ընթացքին, ելոյթ ունեցող հոգեւորականները՝ գլխաւորութեամբ Ամենայն Հայոց Հայրապետին՝ դատապարտեցին անմարդկային արարքները, մարդու դէմ կատարուած ոճիրները, միեւնոյն ժամանակ մխիթարեցին աղէտեալներն ու զոհերու պարագաները: